ՔԱՂԱՔԱԿԱՆ ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ՏԻՊԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԸՍՏ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՉԱՓԱՆԻՇԻ

ՍԱՐԳՍՅԱՆ Ա. Ն.

«Քաղաքական ընդդիմություն» եզրույթը լայնորեն կիրառվում է գիտական հոդվածներում, մենագրություններում, հրապարակախոսություններում: Դրա գործունեության բացակայության պայմաններում անհնար է պատկերացնել ժողովրդավարական հասարակության կայացումն ու զարգացումը: Կայացած ժողովրդավարական համակարգերում քաղաքական ընդդիմությունն ապահովում է քաղաքական տարբեր ուժերի և խմբերի հերթափոխը պետական իշխանության ղեկին, կադրային փոփոխություններն իշխանության կառուցվածքում, ինչպես նաև իրականացնում է վերահսկողություն իշխանության գործունեության նկատմամբ (ԶԼՄ-ների և քաղաքացիական հասարակության հետ): Ընդ որում, իշխանության կայունությունն ու ամբողջականությունը կասկածի տեղիք չի տալիս, քանի որ զարգացած ժողովրդավարության պայմաններում ենթադրվում է, որ ընդդիմադիր քաղաքական ուժերը նույնպես ընդունում են հստակ ամրագրված «խաղի կանոններ», և իշխանության հասնելու միակ լեգիտիմ միջոցը ազատ և արդար ընտրություններն են:

Ընդդիմության առանձին գործունեությունը անհնար է պատկերացնել: Այն հանդես է գալիս որպես իշխանություն-ընդդիմություն համակարգի կարևոր բաղկացուցիչ տարր: Ռ. Դալը ընդդիմության առկայությունը համարում է «պոլիարխիայի» կարևոր պայման[1]: Նա «ընդդիմություն» հասկացության տակ նկատի է առնում որոշակի սուբյեկտ, որը հակադրվում է կամ համաձայն չէ կառա-վարական քաղաքականությանը[2]: Մեր սահմանման համաձայն՝ քա-ղաքական ընդդիմությունը հանդես է գալիս որպես քաղաքական իշխանության համար պայքարող սուբյեկտ, որը հակադրվում է կառավարական քաղաքականությանը կամ դրա ինչ-որ մասին՝ չունենալով պետական կառավարման որոշումներ կայացնելու հնարավորություն, միաժամանակ այլընտրանքային դիրքորոշում ունենալով տվյալ հարցի շուրջ:

Հետազոտությունն ավելի ամբողջական դարձնելու համար անհրաժեշտ է դրա օբյեկտի բազմակողմանի ուսումնասիրություն: Ժամանակակից քաղաքական գիտության մեջ կարևոր խնդիր է ուսումնասիրվող օբյեկտի տիպաբանությունը, այսինքն՝ դրա բաշխումը համեմատաբար միմյանց մոտ խմբերի: Այն թույլ է տալիս տարանջատել գլխավոր (հիմնական) և երկրորդական բնորոշիչներ ուսումնասիրվող օբյեկտների համար: Արժեքավոր տիպաբանություն իրականացնելու համար անհրաժեշտ է, որ

---

[1] **Даль Р.** *Полиархия: участие и оппозиция, М., 2010.*

[2] **Dahl R.** *Political Oppositions in Western Democracies, ed. By R. Dahl, New Heaven and London, 1996, p. XVIII.*

այն ընդգրկի ուսումնասիրվող օբյեկտն ամբողջությամբ, այսինքն՝ տիպաբանության կատեգորիաները պետք է սպառիչ լինեն (ամեն հնարավոր դեպք պետք է համապատասխանի որոշակի կատեգորիայի): Հաջողված տիպաբանության համար կարևոր է նաև ճիշտ և էական չափանիշների ընտրությունը[3]:

Գրականության մեջ առկա են քաղաքական ընդդիմության բազմաթիվ տիպաբանություններ: Մասնավորապես, հիմք ընդունելով գործող իշխանության հանդեպ վերաբերմունքը, առանձնացվում են ընդդիմության համակարգային և ոչ համակարգային կամ հակահամակարգային տիպերը: Այդ երկու տիպերի առանցքային տարբերությունն այն է, որ դրանցից առաջինը կողմ է գործող քաղաքական համակարգի պահպանմանը, որի շրջանակներում քաղաքական ընդդիմությունը ծավալում է իր գործունեությունը: Մինչդեռ երկրորդը հանդես է գալիս քաղաքական համակարգի արմատական փոխակերպման, նոր քաղաքական համակարգի ստեղծման դիրքերից[4]:

Հասարակության քաղաքական կյանքը հետազոտելու և ընկա-լելու տեսանկյունից կարևոր նշանակություն ունի նաև ընդդիմության տարբերակումը կառուցողական և ապակառուցողական կամ ոչ կառուցողական տիպերի[5]: Դրանցից առաջինը ոչ միայն հակադրվում է իշխող քաղաքական ուժին և նրա քաղաքականությանը, այլև առաջարկում է այդ քաղաքականության իրականացման սեփական այլընտրանքային ծրագիրը, որը, այդ ընդդիմադիր ուժերի համոզմամբ, նախընտրելի է իշխող ուժի քաղաքականությունից և առավելագույն չափով համապատասխանում է հասարա-կության շահերին: Ընդդիմության այս տիպի լավագույն օրինակը «Նորին գերազանցության ընդդիմությունն» է Մեծ Բրիտանիայում, որը «ստվերային կառավարության» միջոցով մեծ դեր ունի ներքին և արտաքին քաղաքականության ձևավորման գործում[6]: Առաջարկելով իրական այլընտրանք՝ կառուցողական ընդդիմությունը կարող է դրա շնորհիվ իր շուրջ համախմբել բնակչության ստվար հատվածներին: Քաղաքակիրթ հասարակություններում միայն կառուցողական այլընտրանքի առաջադրումը կարող է բարձրացնել ընդդիմադիր ուժի հեղինակությունը և մեծացնել այդ ուժի՝ իշխանության գալու հավանականությունը: Ապակառուցողական դիրքորոշումն արդյունավետ չէ, քանի որ այլընտրանքային քաղաքական ծրագրի առաջադրման անկարողությունը վկայում է այդ ուժի

---

[3] **Сморгунов Л**. *Сравнительная политология, СПб., 2012, с. 163.*

[4] **Kirchheimer O.** *The Waning of Opposition in Parliamentary Regimes (Social Research, 1957, Vol. 24, N 2, pp. 127-156).*

[5] **Дерябина Е.** *Типология политической оппозиции в интерпретации теории систем , Пермь, 2013, с. 126-127.*

[6] **Potter A.** *Great Britian: Opposition with a Capital §O"| (Political Oppositions in Western Democracies,ed. By R. Dahl, New Heaven and London, 1996;* **Исаев Б. Развитие** *партийной системы Великобритании [Полити-ческая экспертиза (Политэкс), т. 4, N 4, СПб., 2008].*

պրոֆեսիոնալիզմի և երկարաժամկետ ծրագրերի բացակայության մասին և հետևաբար այդքան էլ գրավիչ չէ: Ապակառուցողական ընդդիմությունը հաճախ զբաղվում է պարզապես հասարակության զգացմունքների և կրքերի թեժացմամբ, սոցիալական լարվածության, սոցիալական կոնֆլիկտների առաջացմամբ՝ չունենալով գործողությունների որևէ հստակ ծրագիր:

Քաղաքական ընդդիմության տիպաբանությունը կարելի է իրականացնել նաև ըստ այլ չափանիշների՝

- *ընդդիմության վերաբերմունքն իշխանությունների նկատմամբ (լոյալ-ոչ լոյալ (հետագայում Խ. Լինցը ավելացրեց նաև «կիսալոյալ» տերմինը[7]),*
- *սեփական պահանջների արտահայտման ձևը (բաց-գաղտնի),*
- *գործունեության առանձնահատկությունները (ակ-տիվ-պասիվ),*
- *օրինական կարգավիճակը (լեգալ-անլեգալ),*
- *օգտագործած մեթոդները (զինված-ոչ զինված) և այլն:*

Հնարավոր է առաջ քաշել ընդդիմության տիպաբանության բազմաթիվ այլ չափանիշներ ևս, սակայն այս դեպքում խնդիրն այն է, թե այդ չափանիշներից քանիսի կիրառումն է նպատակահարմար: Վերոնշյալ տիպաբանությունների հիմնական թերությունը նրանց երկակիության մեջ է, երբ այս կամ այն երևույթը դիտարկվում է միայն իր ծայրահեղ դրսևորումներով, մինչդեռ իրական կյանքում առկա են նաև շատ այլ նրբերանգներ: Այս դասակարգումները, հնարավորություն ընձեռելով ուսումնասիրել ընդդիմության գործունեության այս կամ այն կողմը, այնուամենայնիվ, չեն անդրադառնում այնպիսի կարևորագույն խնդրի, որն է ընդդիմության նպատակների վերհանումը: Վերջինիս ուսումնասիրությունը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ ընդդիմության էությունը, բացահայտել դրա գործունեության առանձնահատկությունները, ինչպես և ընդդիմադիր քաղաքական ուժերի հետագա գործողությունների կանխատեսում կատարել:

Այս առումով քաղաքագիտական գրականության մեջ հատուկ ուշադրության է արժանի Ռ. Դալի տիպաբանությունը՝ ըստ նպատակային չափանիշի: Դալն առանձնացնում է ընդդիմության 4 տիպ, որոնք ձգտում են փոխել կառավարության կազմը (1), կառավարության որոշակի քաղաքականությունը (2), քաղաքական համակարգի կառուցվածքը (3), սոցիալ-տնտեսական համակարգը (4)[8]:

Կարևորելով նպատակային չափանիշի դերն ընդդիմության ուսումնասիրությունների գործում՝ մեր առաջարկած տիպաբանությունը

---

[7] *Տե՛ս,* **Linz. J.** *The Breakdown of Democratic Regimes: Crisis, Breakdown and Reequilibration (The Breakdown of Democratic Regimes, ed. By J. Linz and A. Stepan, p. 29).*

[8] *Տե՛ս* **Dahl R.** *Patterns of Opposition (Political Oppositions in Western Democracies, ed. By R. Dahl, New Heaven and London, 1996, p. 341).*

նույնպես հիմնված է հենց այդ չափանիշի վրա: Այսպիսով՝ առաջարկում ենք առանձնացնել ընդդիմության 3 տիպ, որոնք փորձում են հասնել՝

1. *քաղաքական համակարգի ամբողջական փոփոխության,*
2. *իշխանության և դրա քաղաքականության փոփոխության,*
3. *իշխանության և դրա քաղաքականության մասնակի փոփոխության:*

Առաջին տիպի ընդդիմություն ունեցող համակարգերը պարունակում են որոշակի ոչ ժողովրդավարական տարրեր: Ժամանակակից ազատական ժողովրդավարական երկրներում ո՛չ իշխանական, ո՛չ ընդդիմադիր ուժերը երբևէ չեն վիճարկում այնպիսի հարցեր, ինչպիսիք են, օրինակ, մասնավոր սեփականության գոյության անհրաժեշտությունը՝ որպես շուկայական տնտեսության հիմք, կամ երկրին անհրաժեշտ է ժողովրդավարակա՞ն, թե՞ ավտորիտար վարչակարգ, կարիք կա՞ պաշտպանելու խոսքի ազատությունը, ապահովելու մրցակցային ընտրություններ և այլն: Այդ երկրներում առկա է փոխհամաձայնություն՝ որոշակի իդեալների և հասարակության զարգացման նպատակների վերաբերյալ: Իշխող և ընդդիմադիր ուժերի մրցակցությունը վերաբերում է հիմնականում որևէ կոնկրետ օրակարգային խնդրի վերաբերյալ իրականացվող քաղաքականությանը (օրինակ, արդյո՞ք անհրաժեշտ է ավելացնել հարկային բեռը երկրի ամբողջ բնակչության, թե՞ միայն ունևոր դասի համար, արդյո՞ք տվյալ պահին կարիք կա ստեղծելու հակաօդային պաշտպանության համակարգ և այլն): Հետևաբար՝ քաղաքական համակարգի ամբողջական փոփոխության ձգտող ընդդիմությունը կա՛մ գործում է ոչ ժողովրդավարական վարչակարգի պայմաններում և փորձում է իրականացնել անցում, կա՛մ գործում է ժողովրդավարական համակարգում, սակայն, հակադրվելով վերջինիս, ձեռք է բերում ոչ ժողովրդավարական քաղաքական ուժի համբավ: Այս տիպի ընդդիմության օրինակ կարող է ծառայել «Համերաշխություն» արհմիությունը Լեհաստանում 1980-ական թթ.[9]: Այդպիսին էր նաև դեռևս XX դարի 60-ական թթ.-ից գործող ԱՄԿ-ն Հայաստանում[10]:

Իշխանության և դրա քաղաքականության փոփոխության ձգտող ընդդիմությունը գործնականում ամենից հաճախ հանդիպող տիպն է: Այս կատեգորիայի մեջ գտնվող ընդդիմադիր ուժերն ընդունում են առկա խաղի կանոնները, սակայն անմիջական պայքարի մեջ են գործող իշխանությունների հետ որոշումների կայացման հարցում վճռորոշ դեր ունենալու համար: Նման դեպքում հասարակական համակարգի արմատական վերափոխման պահանջ, բնականաբար, չի դրվում: Այս տիպի

---

[9] **Լինց Խ., Ստեփան Ա.,** *Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավա-րության կայացման խնդիրները. Հարավային Եվրոպա, Հարավային Ամերիկա և հետկոմունիստական Եվրոպա, Ե., 2011, էջ 349-350:*

[10] **Енгоян А.** *Идеологические основы социально-политических трансформаций в постсоветской Армении, Е., 2011, с. 126.*

մեջ կարելի է դիտարկել 2013թ.-ի ընտրություններից հետո խորհրդարանում ներկայացված ընդդիմադիր կուսակցությունները, որոնք, ընդունելով Հայաստանի Հանրապետության ժողովրդավարական ուղին, այնուամենայնիվ, առաջ քաշեցին իշխանափոխության գաղափարներ:

Իսկ ահա երրորդ տիպի ընդդիմությունը կարող է կենտրոնանալ քաղաքական կյանքի որոշակի առանձին կողմերի վրա: Ընդդիմության այս տիպի գործունեությունը հատուկ է միջընտրական ժամանակահատվածին, երբ, հնարավորություն չունենալով հասնելու ավելի մեծ փոփոխությունների, ընդդիմությունը հանդես է գալիս մասնակի բարեփոխումների դիրքերից: Դա կարող է դրսևորվել, օրինակ, կոնկրետ անձին կամ իշխող էլիտայի ներկայացուցիչների որոշակի խմբի չընդունելու կամ քաղաքականության իրականացման մեթոդներին հավանություն չտալու տեսքով: Ինչ վերաբերում է տնտեսական և քաղաքական համակարգի հիմքերին, ապա դրանք սկզբունքայնորեն չեն վիճարկվում և ընդունելի են ինչպես իշխող, այնպես էլ ընդդիմադիր ուժի համար: Որպես օրինակ՝ կարելի է նշել ՀՅԴ-ն 2009 թվականին, երբ, չընդունելով իշխանությունների կողմից իրականացվող արտաքին քաղաքականությունը, կապված Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման և Հայ-թուրքական արձանագրությունների ստորագրման հետ, կուսակցությունը դուրս եկավ կոալիցիայից և համալրեց ընդդիմության շարքերը՝ միևնույն ժամանակ ձեռնպահ մնալով իշխանափոխության բացահայտ կոչերից[11]*:*

Այսպիսով, ընդդիմությունը, լինելով ժամանակակից ժողովրդավարական համակարգերի հենասյուներից մեկը, առանձնահատուկ տեղ է գրավում քաղաքական հետազոտություններում, որի դերն ու նշանակությունը հասկանալն անհնար է առանց այս երևույթի համակողմանի տիպաբանության: Առկա տիպաբանությունների շարքում առանձնանում է ընդդիմության տիպաբանությունը՝ ըստ նպատակային չափանիշի, որը թույլ է տալիս համակողմանիորեն ներկայացնել ընդդիմության գործառույթներն ու գործողությունների տրամաբանությունը:

[11] *Տե՛ս,* http://www.azatutyun.am/content/article/1616533.html

ТИПОЛОГИЯ ПОЛИТИЧЕСКОЙ ОППОЗИЦИИ С УЧЕТОМ ЦЕЛЕВОГО КРИТЕРИЯ

САРГСЯН А. Н.

Резюме

В условиях отсутствия деятельности политической оппозиции невозможно представить становление и развитие демократического общества. В данном нами определении политическая оппозиция рассматривается как борющийся за власть субъект, который противостоит политике правительства в целом или частично, и не имея возможности принимать решения в вопросах государственного управления, придерживается альтернативной позиции по многим вопросам. В современной политической науке типология исследуемого объекта является важной задачей. При изучении типов оппозиции, исходя из целевого критерия, было выделено три типа политической оппозиции: первый стремится к полному изменению политической системы, второй – к смене власти и ее политики, третий – к частичной смене власти и ее по-литики.

TYPOLOGY OF POLITICAL OPPOSITION ON THE BASIS OF GOAL ORIENTATION

A. SARGSYAN

Abstract

The establishment and development of democratic society is impossible in the absence of political opposition. The paper defines political opposition as a struggle for power entity that opposes the government policy as a whole or in certain areas, not having the capacity to make decisions on a state level, at the same time maintaining an alternative position on many issues. The typology of political opposition is an important task in contemporary political science. Considering the importance of the role of targets in the process of studying the types of opposition, three types of political opposition have been outlined: the first is committed to the complete change in the political system, the second strives for a change in power and its policy, and the third supports a partial change in power and its policy.